ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 128

23 օգոստոսի 2017 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Պարոն մարզպետ

Կից ներկայացնում ենք Արմավիրի մարզի Ջրառատի համայնքապետարանի 2017 թվականի օգոստոսի 23-ի ավագանու թիվ 6 -րդ արտահերթ նիստի որոշումները:

Առդիր /12 էջ:

Ջրառատի համայնքապետ Ս.Գալստյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ 21-Ա

**<<23>>** *Օգոստոսի* **2017** *թ.* **N 6** *արտահերթ նիստի*

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով․

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրառատ համայնքապետարանի ավագանու 2017 թվականի օգոստոսի 23-ի N 6 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Այվազյան Դերենիկ | | | |
| Բաբուջյան Միհրան | | | |
| Խաչատրյան Հովհաննես | | | |
| Մանուկյան Աննա | | | |
| Մելքոնյան Գևորգ | | | |
| Մելքոնյան Սերոբ | | | |
| Մկրտչյան Նարեկ | | | |
| Սարգսյան Դավիթ | | | |
| Սիմոնյան Վաղարշակ | | | |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*
*Սամվել Գալստյան*

**2017** *թվականի օգոստոսի* **<<23>>**
*Գ. Ջրառատ*

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ<<23>>-Ի
N 21–Ա ՈՐՈՇՄԱՆ

## ՕՐԱԿԱՐԳ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N 6-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ ՄԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

2. << ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ. ԳԱԼՍՏՅԱՆ/

3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ. ԳԱԼՍՏՅԱՆ/

4. ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ Մ. ԳԱԼՍՏՅԱՆ/

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ: /ԶԵԿՈՒՑՈՂ. Մ. ԳԱԼՍՏՅԱՆ/

6. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՅՈՒՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻ: /ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՄԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ 22-Ն

23 օգոստոսի 2017թ — Թիվ 06 արտահերթ նիստի

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով , հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ՎԻՎ օրենսգրքի 156 –րդ հոդվածի 1-ին մասը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել Ջրառատի համայնքապետարանի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Այվազյան Դերենիկ | | | |
| Բարսեղյան Միհրան | | | |
| Խաչատրյան Հովհաննես | | | |
| Մանուկյան Աննա | | | |
| Մելքոնյան Գևորգ | | | |
| Մելքոնյան Մերուժ | | | |
| Մկրտչյան Նարեկ | | | |
| Սարգսյան Դավիթ | | | |
| Սիմոնյան Վաղարշակ | | | |

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

Հավելված

Ջրառատ համայնքի ավագանու 2017 թվականի

օգոստոսի 23 -ի թիվ- 22-Ն որոշման

# ԿԱՐԳ

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Ջրառատ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Ջրառատ համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև գյուղի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

4. Սույն կարգը տարածվում է Ջրառատ համայնքի վարչական տարածքում գտնվող՝

1) շենքերի և շինությունների ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, հանգստի գոտիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների և գազալցակայանների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա:

**5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝**

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը.

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.

3) անհրաժեշտ լուսավորություն՝անշարժ գույքի մուտքի համար.

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

7. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N 91 որոշման համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:

8. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով և միայն համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.

2) տանիքի ձևի ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ,

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

**9.** Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Ջրառատի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից տրված ճարտարապետական կամ ձևավորման նախագծին համապատասխան՝ համայնքի ղեկավարի համաձայնությունը ստանալուց հետո:

**10.** Ջրառատի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ անշարժ գույքի բարեկարգման և կատարվող այլ աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

**11.** **Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝**

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով.

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը.

12. Ջրառատ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր և /կամ/ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

13. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական զանկացած փոփոխություն, այդ թվում արտաքին գովազդի տեղադրումը, համաձայնեցնում է Ջրառատի համայնքապետարանի հետ:

14. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

15. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

ՀԱՅԱUSՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ Ջ ՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ 23-Ա

<<23>> օգոստոսի 2017 թ.　　　　　　　　　　N 6 արտահերթ նիստի

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սոցիալական օգնություն հատկացնել անապահով հինգը ընտանիքների դրամական օգնության տրամադրել: (համաձայն հավելվածներ 1 ):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝　ԿՈՂՄ՝　ԴԵՄ՝　ՁԵՌՆՊԱՀ՝

Արվազյան Դերենիկ
Բաբուջյան Միհրան
Խաչատրյան Հովհաննես
Մելքոնյան Գևորգ
Մելքոնյան Սերոբ
Մանուկյան Աննա
Մկրտչյան Նարեկ
Սարգսյան Դավիթ
Սիմոնյան Վաղարշակ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Սամվել Գալստյան

2017թվականի օգոստոսի 23-ին
գ. Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ Ջ ՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ 23-Ա

<<23>> օգոստոսի 2017 թ. N 6 արտահերթ նիստի

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սոցիալական օգնություն հատկացնել անապահով հինգը ընտանիքների դրամական օգնության տրամադրել: (համաձայն հավելվածներ 1 ):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման պահից

| ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Արվաջյան Դերենիկ | | | |
| Բաբուցյան Միհրան | | | |
| Խաչատրյան Հովհաննես | | | |
| Մելքոնյան Գևորգ | | | |
| Մելքոնյան Սերոբ | | | |
| Մանուկյան Աննա | | | |
| Մկրտչյան Նարեկ | | | |
| Սարգսյան Դավիթ | | | |
| Սիմոնյան Վաղարշակ | | | |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Սամվել Գալստյան

2017թվականի օգոստոսի 23-ին
գ. Ջրառատ

ՀԱՎԵԼՎԱԾ N1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ<< 23>>-Ի
N 23-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայրապետ Զաքարյան Բենյամինի 50000դրա
2. Խաչատրյան Կարապետ Հովհաննեսի 50000դրամ
3. Արմեն Միշայի Թորոսյան 50000 դրամ
4. Մինասյան Ցոլիկ Սաստնիկի 30000 դրամ
5. Մնացականյան Ռաֆիկ Մնացականի 50000 դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ------------------------------------
Սամվել Գալստյան

2017թվականի օգոստոսի<<23>>
գ. Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ 24-Ա

**23>>** *օգոստոսի* **2017** *թ.* **N 6** *արտահերթ նիստի*

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. *08.2.4 ծրագրի-4239 հոդվածից 300000/ երեք հարյուր հազար/դրամ հատկացնել առաջին դասարցիներին նվերներ գնելու համար:*
2. *Սույն որոշումը ուժի մեջ է մտնում որոշման պահից:*

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Այվազյան Դերենիկ | | | |
| Բարուցյան Միհրան | | | |
| Խաչատրյան Հովհաննես | | | |
| Մելքոնյան Գևորգ | | | |
| Մանուկյան Աննա | | | |
| Մելքոնյան Սերոբ | | | |
| Մկրտչյան Նարեկ | | | |
| Սարգսյան Դավիթ | | | |
| Միմոնյան Վաղարշակ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
Սամվել Գալստյան

**2017**թվականի օգոստոսի**<<23>>**
գ. Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ 25

23 օգոստոսի 2017թ — թիվ 6 արտահերթ նիստ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ընդունել համայնքի ղեկավարի կիսամյակի հաշվետվությունը /համաձայն հավելվածի/։
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

| Ավագանու անդամներ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Այվազյան Դերենիկ | | | |
| Բարոյան Միհրան | | | |
| Խաչատրյան Հովհաննես | | | |
| Մելքոնյան Գևորգ | | | |
| Մելքոնյան Սերոբ | | | |
| Մանուկյան Աննա | | | |
| Մկրտչյան Նարեկ | | | |
| Սարգսյան Դավիթ | | | |
| Սիմոնյան Վաղարշակ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ 26

23 օգոստոսի 2017թ

Թիվ 6 արտահերթ նիստի

# ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով »Տեղական ինքնակառավարման մասին« Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասի 13 կետով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 01.08. 2017 թվականի թիվ 01/03.2/3220-17 հանձնարարականի

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Իրավաբանական անձանց աղբահանության վճար սահմանել մեկ քառակուսի մետրի համար 25 քսանհինգ/ դրամ::
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Այվազյան Դերենիկ | | | |
| Բաբուջյան Միհրան | | | |
| Խաչատրյան Հովհաննես | | | |
| Մանուկյան Աննա | | | |
| ՄելքոնյանԳևորգ | | | |
| Մելքոնյան Մերուբ | | | |
| Մկրտչյան Նարեկ | | | |
| Սարգսյան Դավիթ | | | |
| Սիմոնյան Վաղարշակ | | | |

Համայնքի ղեկավար Ս.ԳԱԼՍՏՅԱՆ